ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 530 - Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 10 ԵՎ 17 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Աջափնյակ վարչական շրջանի գոտևորման նախագիծը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սույն որոշման N 1 հավելվածում նշված տարածքների նկատմամբ ճանաչել հանրության գերակա շահ՝ հետևյալ հիմնավորումներով.

1) սույն կետում նշված տարածքներում քաղաքաշինական ծրագրի (վթարային բնակֆոնդի վերականգնում՝ Երևան քաղաքի Արզումանյան փողոցի 10 և 17 հասցեներում գտնվող քանդման ենթակա՝ վթարային հանդիսացող շենքերի քանդման, բնակիչների վերաբնակեցման և տեղում նոր շենքերի կառուցման)

իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերի նկատմամբ, քանի որ՝

ա. քաղաքաշինական ծրագրի իրականացման արդյունքում Երևան քաղաքի Արզումանյան փողոցի 10 և 17 հասցեներում գտնվող քանդման ենթակա՝ վթարային հանդիսացող շենքերը կապամոնտաժվեն, կվերանա շենքերի փլուզման վտանգը, կկառուցվեն նոր բազմաբնակարան շենքեր, կապահովվի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների և երրորդ անձանց անվտանգությունը, կբացառվեն անկանխատեսելի հետևանքները և կլուծվեն քաղաքի տվյալ հատվածում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրները,

բ. տվյալ տարածքում կբարելավվի բնակիչների կյանքի որակը՝ վերականգնվելով հանգստի, զբոսանքի ժամանցի համար տեղային գրավիչ, գեղագիտական վայրերը, կմաքրվեն անկանոն, քաոսային կերպով տեղաբաշխված և բարեկարգ բակի ստեղծմանը խոչընդոտող ծանրաբեռնված տարածքները՝ ազատելով դրանք տարերայնորեն տեղակայված կառույցներից, և տեղում կիրականացվեն կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ և կստեղծվեն կանաչ հանգստի գոտիներ,

գ. կբարելավվի սանիտարական վիճակը և կվերականգնվի էկոլոգիական հավասարակշռությունը, ինչպես նաև կանաչապատման և հանգստի վայրերի ստեղծման համար ընդհանուր օգտագործման տարածքը առավելագույնս կազատվի ավտոտնակներից և այլ օբյեկտներից՝ դրանք տեղակայելով ստորգետնյա կառուցվածքներում.

2) սույն կետում նշված քաղաքաշինական ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց սույն որոշման N 1 հավելվածում ընդգրկված սեփականության օբյեկտների օտարման, քանի որ դրանք գտնվում են սույն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական ծրագրի իրականացման գոտում և անհնար է ապահովել ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը՝ առանց դրանց օտարման.

3) օտարվող սեփականության նկատմամբ ճանաչված հանրության գերակա շահը չիմնավորված վնաս չի պատճառում սույն որոշման N 1 հավելվածում նշված տարածքների սեփականատերերին:

2. Հաստատել՝

1) սույն որոշման N 1 հավելվածում ընդգրկված սեփականության օբյեկտների օտարման սխեման՝ համաձայն NN 2 և 3 հավելվածների.

2) Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցվող բնակարանների վերանորոգման նվազագույն պայմանները՝ համաձայն N 6 հավելվածի:

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված տարածքների ձեռք բերող է հանդիսանում Երևան համայնքը.

2) նախատեսված օտարման գործառույթների իրականացումը համակարգող պետական լիազոր մարմնի գործառույթը պատվիրակվում է Երևանի քաղաքապետին.

3) սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը 2024 թվականի հունվարի 1-ն է.

4) սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման գործառույթներն իրականացնում է Երևանի քաղաքապետը.

5) սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշմամբ սահմանված կարգով և որոշմամբ սահմանված նկարագրության արձանագրության օրինակելի ձևով:

4. Հավանություն տալ «ՄԼ Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Արզումանյան փողոցի 10 և 17 հասցեներում գտնվող քանդման ենթակա՝ վթարային շենքերի քանդման, տեղում նոր շենքերի կառուցման և բնակիչների վերաբնակեցման ներդրումային ծրագրին՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Համաձայնություն տալ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ սույն որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված և օտարման գործընթացի ավարտից հետո համայնքային սեփականություն դարձած՝ Արզումանյան 10 հասցեում 3896 քմ ու Արզումանյան 17 հասցեում 4183 քմ մակերեսներով հողամասերը «ՄԼ Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ուղղակի վաճառքի ձևով օտարմանը՝ ներդրումային ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն N 5 հավելվածի:

6. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց.

2) «ՄԼ Մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կնքել ներդրումային ծրագիրն իրականացնելու վերաբերյալ պայմանագիր՝ համաձայն N 4 հավելվածի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ